

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԻՑ ՇԱՏ ՎԱԽԵՆՈՒՄ ԷՐ «ՄԱՅԴԱՆԱՅԻՆ» ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՑ. ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐ

.07.2015 17:00

[ԲանավեճՄեդիա կենտրոն Լիլիթ Առաքելյան](#)



Ոստիկանության գործողություններն էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ պայքարում, մասնավորապես՝ հունիսի 23-ի դեպքերին, ըստ իրավապաշտպանների, ուժի ցուցադրում էր և պատժիչ գործողություն:

Հուլիսի 10-ին «Մեդիա կենտրոնի» նախաձեռնությամբ «A1+»-ի հեռուստատաղավարում այս թեմայով քննարկմանը մասնակցում էին Գյումրու Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ **Լևոն Բարսեղյանը**, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար **Արթուր Սաքունցը**, «Իրավունքի Եվրոպա» ՀԿ-ի փաստաբան **Տիգրան Եգորյանը**, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ծրագրերի համակարգող **Դանիել Իռաննիսյանը** և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի տնօրեն **Արման Դանիելյանը**:

«Թե ինչու հունիսի 23-ի առավոտյան կիրառվեց այդ բռնությունը, ես մինչև հիմա չեմ կարողանում հասկանալ: Ոստիկանությունը իր ամբողջ զինանոցը գործադրեց նստացույցի շուրջ 300 մասնակցի վրա, որոնց կեսն էլ ոստիկանության աշխատակիցներն էին: Այս ուժի կիրառումը ամբողջ զինանոցով ես անվանում եմ ցինիկ, հերթական ուժի ցուցադրում, որպեսզի վախեցնեն քաղաքացիներին, և նրանք հրաժարվեն իրենց բողոքը ցույց տալուց, բայց հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ դա որն է արդյունք չունեցավ», -ասաց Արթուր Սաքունցը:

Հիշեցնենք, որ շուրջ 15 օր քաղաքացիական հասարակությունը նստացույց անկացրեց Բաղրամյան պողոտայում՝ ընդդեմ էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման, պահանջելով

իշխանություններից չեղյալ համարել էլեկտրաէներգիայի սակագինը 7 դրամով թանկացնելու որոշումը:

Սակայն Բաղրամյանի նստացույցի առաջին օրը՝ հունիսի 23-ի վաղ առավոտյան, ժամը 05:30-ի սահմաններում նստացույց իրականացնող երիտասարդների նկատմամբ ոստիկանությունը կիրառեց բռնի ուժ և ջրցան մեքենաներով ազատեց Բաղրամյան պողոտան: Ըստ պաշտոնական տվյալների՝ ոստիկանները բերման էին ենթարկել շուրջ 237 ակտիվիստի, նրանցից շատերը ստացել էին մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներ: Մի քանի տասնյակ ցուցարարների տեղափոխել են բուժհաստատություններ, մի քանիսն անգամ հայտնվել են վերակենդանացման բաժանմունքներում:

Բռնություններից անմասն չէին մնացել որոշ լրագրողներ և օպերատորներ, ովքեր իրենց մասնագիտական գործունեությունն էին ծավալում դեպքի վայրում:

«Իշխանության լեգիտիմության բացակայության, ապաշնորհի և անարդյունավետ քաղաքականության արդյունքում ստեղծվել է այնպիսի մի իրավիճակ, որ նույնիկ փոքր, լոկալ խնդիրները, որոնք կարող են հուզել հասարակության 100 հոգանոց սեգմենտի, իշխանության համար կենսական վտանգ է սկսել ներկայացնել: Հունիսի 23-ի դեպքը խոսում է իրավապահ համակարգի և հանրային կառավարում իրականացնող պաշտոնյաների ոչ պրոֆեսիոնալիզմի մասին, որոշումների սիրողական մակարդակում կայացնելու մասին», - ասում է քննարկման մասնակից Տիրգրան Եգորյանը:

Նա հավելում է, որ որոշումները չեն կայացվում՝ ելնելով իրավունքի և իրավիճակի օբյեկտիվ քննարկման արդյունքում:

Դանիել Իոաննիսյանն ասում է, որ իշխանությունը ամենից շատ վախենում էր «մայդանային» տեխնոլոգիաներից:

«Եվ այն, որ հունիսի 23-ից հետո երկու շաբաթ շարունակ իշխանությունը որևիցե ցուցարարի մատով չկպավ, բացատրվում է նրանով, որ որ իշխանությունը վախենում էր ևս մեկ անգամ բարկացնել ցուցարարներին, որովհետև հասկանում էր, որ սա կարող էր ոչ միայն մարդկանց քանակի բազմապատկման բերել, այլև պահանջների և պայքարի մեթոդների խստացման: Ի տարբերություն բազմաթիվ այլ դեպքերի, այս անգամ որևիցե ցուցարար մատով որևէ ոստիկանի չի կպել, սա եղել է բացարձակ խաղաղ ակցիա», - նշում է Իոաննիսյանը:

Ըստ նրա՝ 2013-2014 թթ-ին տարբեր տեսակի հավաքաների ժամանակ ոստիկանությունը բերման է ենթարկել 286 քաղաքացու, իսկ միայն Բաղրամյան պողոտայի պայքարի ժամանակ հունիսի 23-ին և հուլիսի 6-ին բերման է ենթարկվել ճիշտ նույն քանակով քաղաքացի:

«Այսինքն բոլոր ռեկորդները խփված են, սա պատժիչ գործողություն էր», - ընդգծում է Իոաննիսյանը:

Լևոն Բարսեղյանը կարծում է, որ Ոստիկանությունը իներցիայով է առաջնորդվել:

«Նույն ժամին Գյումրու թատերական հրապարակից բերման են ենթարկվել 13 հոգի, որոնցից մեկը կասկածյալ է, մնացածը վկաներ: Այդ վկաներին ստիպել են հանվել ոստիկանատանը, առգրավվել են նրանց ամբողջ հագուստը և բջջային հեռախոսները: Մի քանի հոգի ասել են նույնիսկ բա մեզ իսի՞ չեք տանում, ասել են ավտոների մեջ տեղ չկա: Այսինքն արտուրդի հասնող գործողություններ են եղել», -նշում է Բարսեղյանը:

Արման Դանիելյանը հղում է կատարում «Ոստիկանության մասին» օրենքին և նշում, որ ըստ հոդված 12-ի, ոստիկանը այդպիսի միջոցառումների ժամանակ, պետք է կրի սահմանված նմուշի հագուստ:

«Որի վրա պետք է լինի այդ ոստիկանի նույնականացման նշանները, անունը կամ համարը: Բնական է, որ քաղաքացիական հագուստով ոստիկանների վրայի թևկապը, որոնց վրա գրված էր police, ոչ միայն լեզվի մասին օրենք է խախտում, այլև ոստիկանության մասին օրենք: Ոստիկանությունը պանիկայի աստիճանի վախենում է հանրային միջոցառումներից և հեղափոխություններից, բայց միևնույն ժամանակ ամեն ինչ անում են, որ հասարակությունը իր կարծիքը հասնելու ուրիշ խողովակ չունենա, քան հենց հանրային միջոցառումը, որովհետև Ազգային Ժողով չունենք, Հանրային խորհուրդ չունենք: Միակ ձևը, որ ուզում ես քո ձայնը հասցնես իշխանություններին, պետք է դուրս գաս փողոց», -հավելեց Դանիելյանը:

Նշենք, որ «Մեդիա կենտրոնը» հրավեր էր ուղարկել նաև Հատուկ քննչական ծառայություն, Ոստիկանություն և Ազգային Ժողովի պետական-իրավական հարցերի և մարդու իրավունքների մշտական հանձնաժողովներ, սակայն այս կառույցներից հրաժարվեցին մասնակցել քննարկմանը:

Լիլիթ Առաքելյան «Մեդիա կենտրոն» ծրագրի համակարգող-խմբագիր

Հեղինակի հետ կապվելու համար գրեք Lilitarakelyan@pjc.am հասցեին:

Տեսանյութ

Տե՛ս հղումն այստեղ՝ <http://media-center.am/hy/1436623738>